

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ածն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարկւումեակի տօնախմբութիւնները. — ՆԵՐ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Փաստա-
բանների ժողովը. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՆԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական
դէմքեր

ՀԱՐԻԻՐԱՄԵՆԱԿԻ ՏՕՆԱԽՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այսօրվանից Թիֆլիսում սկսվում են
Վրաստանի միացման հարկւումեակի յո-
բերանական տօնախմբութիւնները, որոնք
կը շարունակվեն մինչև ներկայ ամսի 29-ը:
Երէկ, սեպտեմբերի 24-ին, Բորժոմի
Թիֆլիս ժամանեցին այդ տօնախմբութիւն-
ներին ներկայ լինելու Օգոստափառ հիւ-
ներ, Կովկասեան նախկին փոխարքայ Մեծ-
իշխան Միխայիլ Նիկոլաւիչ և Նորին
Մեծութիւն յունական թագուհի Օլգա
Կոնստանտինովնա: Գաղափար զարդարված է
գրօշակներով, կանգնեցրած են կամարներ,
փողոցներում ձգված են կանաչի պարան-
ներ, պատշգամբներ պատած են զորգերով:
Մենք հաղորդեցինք տօնախմբութիւն-
ների ծրագիրը Վշակի անցեալ համարում:
Վրաց աշխուհականութիւնը Թիֆլիս քա-
ղաքի վարչութեան հետ միասին ամեն
կերպ աշխատել են տալ այդ տօնին հան-
դիսաւորութիւն և ժողովրդական բնաւորու-
թիւն: Հրաւիրված են թէ Վրաստանի գա-
նազան գաւառների և թէ Թիֆլիս քաղաքի
ազգաբնակչութեան և հիմնարկութիւնների
կողմից ներկայացուցիչներ, որոնք և հիւ-
պետք է լինեն տօնախմբութիւնների մի-
ջոցին.

Անցած, ապրած հարկւումեակը մի նա-
խապատրաստական շրջան է այն քաղա-
քացիական և հասարակական կեանքի հա-
մար, որի մէջ մենք մտել ենք այժմ: Այդ
հարկւումեակի ընթացքում կովկասեան
ազգաբնակչութիւնը գտնվում էր միաժա-
մանակ երկու տարամարդութեան մէջ, այն
է գործունէութեան փորձերի և հանգըս-

տութեան զգացմունքների շրջաններում:
Պարսկական և թիւրքական տիրապետու-
թեան ծանրութիւններից յետոյ կովկա-
սեան ազգաբնակչութեան համար դրական
նշանակութիւն ունէին հանգստութիւնը
և անդորութիւնը: Սակայն ազգաբնակչու-
թեան այդ տրամադրութեան զուգընթաց
ծագում էին մի շարք շարժումներ, որոնց
նպատակն էր գտնել նոր, աւելի լայն,
աւելի խելացի հասարակական կեանքի հա-
մար զարգացման ուղիներ:

Եւ փորձեր արված են բաւականաչափ
զուսուզան ասպարէզներում: Որքան էլ
զանազան շարժված լինեց անցած հարկու-
մեակում, որքան էլ մեր փորձերը թող
և անհաստատ համարվեն, այնուամենայ-
նիւ մի բան անուշաւայի է, որ մենք
զգում ենք մեզ կոչված քաղաքակրթ-
մարդկութեան մեծ ընտանիքի մէջ մտնե-
լու:

Եթէ անցած հարկւումեակում շատ
չենք գործել, որպէս զի մենք լինէինք
այժմ աւելի գործունէայ քաղաքացիներ և
աւելի ուժեղ հասարակական տարր, մենք
գրաւ փոխարեն սովորել ենք գործելու և
աշխատելու եղանակները, որոնք պէտք է
գործարկենք մեր երկրորդ հարկւումեակը
բեղմնաւոր և զօրաւոր դարձնելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՍՐՈՆ

«Հայրենական» օտն», դրամա Յուդիմանի, 4 գոր-
ծողութեամբ:

Մի քանի արգելափակումներ, որոնք ըստ երե-
ւոյթի կարծել էին տալիս, որ Թիֆլիսը ներ-
կայ սեզոնում գուրկ պէտք է լինի հայկական
ներկայացումներից—հարթվեցին գոնէ առժա-
մանակ եւ հայ դերասանական խմբի համար-
ձակ նախաձեռնութեան եւ ջերմ եռանդի շնոր-
հիւ մենք այժմ ուրախութեամբ ականատես
ենք լինելու հայկական ներկայացումների, ու-
րոնց յարձակ սկսվեց Պուշկինի «Հայրենա-
կան» ստուգանքները: Հոր անմիջական ազդե-
ցութիւնը, ուրեմն, ակնյայտ է այստեղ, բանա-
ստեղծի հէնց առաջին քայլերի վրա: Բայց
կայ մի այլ ազդեցութիւն, որի մասին չէ կա-
րելի երկու խօսք չանել:

Մեր աշխարհիկ բանաստեղծութեան սկիզբը
որոնորդ պիտի գնայ Վենետիկ, Միսթրաբան
վարդապետների մօտ, այդտեղ նա կը գտնէ
մի շատ հետաքրքրական ծնունդ:

Յայտնի է, որ Միսթրաբանները վերանո-
րոգեցին մեր գրաբար գրականութիւնը, հասց-
րին նրան զարգացման եւ փարթաւութեան
բարձր աստիճանին: Պէտք էր մի անհուն սէր
գէտի հին լեզուն՝ այդպիսի մի մեծագործու-
թիւն կատարելու համար. եւ Միսթրաբաննե-
րը այնքան սիրահարված էին այդ լեզուի վրա,
որ շատ քիչ զեպներում էին դիմում աշխարհ-
հաւերին, որին նայում էին իբրեւ մի ժամա-
նակաւոր գործիք՝ գրաբար տարածելու հա-
մար: Նրանք միանգամայն համոզված էին, որ
գրական լեզու նոր ժամանակների համար էլ
կարող է դառնալ միմյանի գրաբար:

Եւ ինչպէս հաւատալին թէ աղքատ ու մու-
րացիկ աշխարհաբար կարող է երեւել փո-
խարինել հին լեզուն: Տասնիններորդ դարի ե-
րեսնական ու քսանական թվականները
Միսթրաբան գրաբարի ոսկեդարն էին: Թարգ-
մանվում էին հին կլասիկները ճոխ ու հա-
րուստ գրաբարով. թարգմանիչները ցոյց են
տալիս անհուն հմտութիւն մեր հին լեզուի
մէջ եւ քանադասական աշխի ընկնող ընդու-
նակութիւն: Այդ շատ աղող թարգմանութիւն-
ները դառնում են օրինակ եւ Միսթրաբան-
ները սկսում են ինքնուրոյն բանաստեղծու-
թիւններ էլ գրել, հաստատարւմ մնալով այդ
օրինակներին: Մագիւում է կեղծ-կապիճական
ուղղութիւնը, որ աւելի լայն էր հարուստ
ոճն ունի ի նկատի քան բովանդակութիւնը:

կան տուն» («Heimath») դրամայով:
Պուշկինի գերմանական ժամանակակից
նշանաւոր դրամատուրգներից մէկն է, որի
ստեղծագործութիւնները Գերմանիայից դուրս
օտար բեմերի վրա եւս յաճախ փայլում են:
Իբրեւ թատերագրող (ինչպէս նաեւ իբրեւ վի-
պասան) նա չէ ներկայանում ըստ ինքեան մի
այնպիսի խոշոր մեծութիւն, մի այնպիսի ինք-
նուրոյն, առաջնորդող անհատականութիւն,
ինչպիսին նորվեգացի հռչակաւոր դրամատուրգ
Իբսենն է: Թէեւ շատերի համար դեռ վիճելի
է, բայց մեզ թւում է, որ նա իր հայրենակից
եւ մրցակից միւս նշանաւոր դրամատուրգ
Գերհարտ Հաուպտմանից անկասկած նոյնպէս
յետ է մնում: Վերջինս թէեւ աւելի երիտա-
ւարդ, բայց իբրեւ դրամատուրգ անպայման
աւելի տաղանդաւոր, աւելի ինքնատիպ եւ ա-
ւելի լուրջ է: Որքան Հաուպտմանի քնքոյշ,
բայց երբեմն մոռյլ դիմապէներ, մեղամաղձոտ
աչքերի մէջ գերմանական ոգին է թիրազա-
նում: Միշտ խոր, միշտ զգայուն, միշտ մտա-
խոն, նոյնքան Պուշկինի վտառուն, գեղա-
տեսիլ, վայելչակազմ ու մշտախնամ արտաքի-
նից փրանսիական արեւելահեռքեր են նշար-
վում. եւ յիշուի նա իր ընդհանուր բանաս-
տեղծական խառնուրդով աւելի շատ փրան-
սիացի է քան թէ գերմանացի. նրա նախու-
րադիմը երբեմն զուտ փրանսիական կօյրիտ
է ստանում: Բացի իր առաջին եւ նշանաւոր
դրամայից՝ «Պատիւ»՝ բաւական է յիշել «Սո-
դոմի վերջը», «Թիթենիկների ճակատամար-
տը», նոյն իսկ «Յովնանէս»:

Փրանսիական է Պուշկինի եւ մի ուրիշ
առանձնապատկերիւնը, որ կարծիք թելի նը-
ման անցնում է նրա թատերական գրուածնե-
րի համարեա ամբողջ շարքով (բացառութիւն
է կաղնում գուցէ միայն «Սոդոմի վերջը») եւ
որի մէջ երբեմն նրա ունեցած աղողութիւն-
ների չարժանիքը պէտք է որոնել—դա բեմա-
կան արուեստի մէջ նրա ցոյց տուած ճարտար
հմտութիւնն է: Մի նշանաւոր քննադատ-վի-
պասանի այն խօսքը թէ «դրամատուրգը ալըն-
թարթի, վայելեանի տէրն է» գուցէ նորերից
ոչ ոք այնքան խիստ հետեւողականութեամբ

Պարարը ոսկի ու բնիկ հազած թագուհի է,
չլացնում է իր անպատ հարստութիւններով.
եւ թւում էր թէ նրա թագաւորութեան չը
կայ վախճան, թէ նա պիտի լինի տիրապետու-
ղը, հրամանատարը, հպատակեցնողը:

Բայց հէնց այդ իսկ միջոցին, ամենագոր իշ-
խանապետութեան այդ փառաւոր օրերում,
թարձրանում է ժողովրդական լեզուի դատը:
Ինչպէս եւ հոր—այդ թողնենք, Հետաքրքրա-
կանը, զարմանալին այն է, որ նոյն այդ Վե-
նետիկում երեւան է գալիս եւ աշխարհաբարի
իրաւունքը: 1843-ին սկսվում է «Բազմավէպի»
հրատարակութիւնը: Այս կիսամեայ պարեմ-
ական, ժողովուրդը կրթելու համար, աշ-
խարհաբար լեզուն է ընտրում. եւ դուրս է
գալիս մի խիստ վայելուչ, չէնքով-նորհող
լեզու—Այլազգայնու կոչ ու գողտրիկ արեւ-
մտեան աշխարհաբարը:

Գրաբարի եւ նրա հետ կապված կեղծ-կա-
պիճական ուղղութեան թագաւորութիւնը ձեռը-
վում է հէնց այնտեղ, ուր նա հաստատուել էր
իր շքեղ գահը: Մի ձեռքով Միսթրաբան վար-
դապետը գրաբար խրթին տաղեր է գրում,
Հոմերոս ու Վիրգիլիոս է թարգմանում, «Հայկ
Գիւլագան» է շարադրում, միւս ձեռքով քաղց-
րիկ աշխարհաբարով դաստիարակական ու
քաղաքացիական խորհրդածութիւններ է գը-
րում «Բազմավէպի» համար, պատմութիւն ու
քննադատութիւն է սովորեցնում նրա ընթեր-
ցողներին: Գեղեցիկ դարձութիւնը այդտեղ
միայն ոտանաւորներից է բաղկացած: Ոտա-
նաւորները գրաբար են, դեռ տիրում է այն
հասկացողութիւնը թէ արագալեզութիւն է բա-
նաստեղծութեան լեզուն էլ աշխարհաբար
դարձելու: Բայց մի մի անգամ, ժողովրդին
հասկանալի գեղարուեստ տալու համար, տալա-
գրվում են մեր ժողովրդական ու աշուղական
երգերը: Ձարմանալի բան՝ Վիրգիլիոսի պերճ

չէ իրագործել ինչպէս Պուշկինը. նա այս
տիրական իշխանութիւնը երբեմն շատ առա-
տաձեռն կերպով է գործ գնում:

Ինչ վերաբերում է տեխնիկական հնարա-
գիտութեանը՝ նա Իբսենից յետոյ անկասկած
միանգամայն անգուգական է. առանձնապէս
տալաւորութիւն թողնելու, էֆֆէկտ առաջացնե-
լու արուեստը նա երբեմն ամենանուրը կա-
տարելագործութեան է հասցնում: Էֆֆէկտ
գործելու տենչը ի հարկէ շատ անգամ դրա-
մատիքական ստեղծագործութիւնը արուեստա-
կան է դարձնում. այս պակասութիւնը նկա-
տելի է մանաւանդ միջակ տաղանդի տէր դրա-
մատուրգների մօտ, ուր դրամատիքական հիւ-
սուածքի կեղեւը երբեմն միջուկը փոխարինե-
լու վտանգաւոր դերը պէտք է ստանձնի—բայց
կատարեալ դրամատիքական գրուածքներում
էֆֆէկտ ոչ թէ թատերագրողը քմահաճոյքից,
գիտաւորութիւնից է կախված, այլ մի ներքին
անհրաժեշտութեամբ բղնում է հէնց գործո-
ղութեան ընթացքից. այսպէս են Մեքսպիլի
եւ Իբսենի շատ ստեղծագործութիւններ, նոյն-
պէս եւ Հաուպտմանի մի քանի դրամաներ—
«Ջուլիաններ», «Պորաւորված զանգակը»,
«Կառապան Հէնչեր»:

Գալով Պուշկինին՝ չէ կարելի չը խոստո-
ւանել, որ էֆֆէկտ գործելու ցանկութիւն-
նը նրա մօտ երբեմն շատ ուժեղ է. բայց այս
իրողութիւնից չը պէտք է հակադրած կերպով
կերպացնել, որ նրա դրամաների մէջ բնցա-
կայում են հոգեբանութիւն, միտք, իդէա, ան-
հատական կամ սոցիալական պրօբլէմներ: Թի-
շում ենք, մօտ է՛յ տարի առաջ նա Բերլի-
նում, մի հրապարակական բազմամարդ ժողո-
վում հետեւեալ յայտարարութիւնն էր անում.
«Անգոյն, անբովանդակ իդէալիզմի, ինչպէս եւ
Դիւմայի ու Սարգուի դարն արդէն անցել է.
մենք ունենք այժմ մի դրամա, որ ոչ Վեբերի
«Էնդհանուր պատմութեան» մէջ է որոնում իր
նիւթը, ոչ փրանսիականների ողորմութիւն
հայցում, ոչ մանիակալիկներին եւ ոչ երի-
տասարդ գիշապաններին է իբրեւ հերոս ընտ-
րում—«սօցիալական դրամա» (տես «Մը-
չակ» 1900 № 64):

ու փառաւոր «Ենթականի» եւ «Մշակականի»
հետ միասին Միսթրաբանների մամուլի տա-
կից դուրս է գալիս «Կոնսկի, ուստի կու գաս»
երգը: Մի հպարտ ու պծնված թագուհի եւ
մի պարզ, կիսամերկ գեղջիկուհի կանգնած են
միմյանի, լոյս են եկել մի եւ նոյն ժամանակ
մի վեհաբող էր, նայելով այդ երկուսին, մըտ-
քով անգամ անցկացնել թէ Հիւրմուղի եւ
Բագրատունում Վիրգիլիոսը կերթայ գրադա-
րանների փոշու մէջ պտակելու, իսկ անյայտ,
հին դարերի այլաժ օրաց դուրս թափված
«Կոնսկի» կանցնէ ժողովրդի բերանը, կը
դառնայ նրա սիրելի երգը...

Այն, այսպիսի հրաշք էր գործում ժողովրդի
լեզուն:

«Բազմավէպի» աշխատակիցների թվում կար
եւ մի 25—27 տարեկան երիտասարդ վարդա-
պետ, թանգ գրաբարեան, բայց իսկական բա-
նաստեղծ: Փառանակական թվականների ըն-
թացքում նա գրեց շատ եւ շատ ոտանաւոր-
ներ, մեծ մասը այնպիսի խրթին գրաբարով,
որ հմուտ հայագետն էլ չէ կարող տեսնել քա-
ռարանի օգնութեան խորատուզով նրանց
իմաստի մէջ: Անա այդ երիտասարդին նուա-
ճում է աշխարհաբարը եթէ ոչ բոլորովին,
գոնէ այնքան ուժեղ, որ նա նոյն այդ թա-
կաններին գրում է եւ աշխարհաբար ոտանա-
ւորներ:

Բայց ինչ էր կարող աշխարհաբարով երգել
մի վարդապետ: Բաց արեք «Բազմավէպի»
1849 թվականի 7-րորդ եւ 9-րորդ համարները,
այդտեղ կայ «Ազգասիրութիւն» վերնագրով
յօդուածը: Կարգապէս, նա այժմ էլ կարգա-
պէս է մեծ հետաքրքրութեամբ, այնքան ու-
ժեղ, պողպատէ չէլու ունի, այնքան առողջ ու
սիրուն տրամաբանութիւն: Մեզանում կար
«ազգասիրութիւն» բառը, բայց նա բացարձակ
չէր, մանաւանդ հասկացված չէր, գիտակցու-

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкокая ул.